ԵԴ1/0301/01/24

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

11 մարտի 2025 թվական քաղաք Երևան

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական պալատը,

նախագահությամբ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

ուսումնասիրելով թիվ ԵԴ1/0301/01/24 քրեական վարույթի տարածքային ընդդատության հարցը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2025 թվականի մարտի 3-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2024 թվականի փետրվարի 13-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանում ստացվել է Կարեն Սասունի

Ադամյանի վերաբերյալ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական օրենսգիրք) 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով թիվ 46157819 (ԵԴ1/0301/01/24) քրեական վարույթը:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2024 թվականի փետրվարի 15-ին որոշում է կայացրել թիվ ԵԴ1/0301/01/24 վարույթն ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2025 թվականի փետրվարի 24-ին որոշում է կայացրել թիվ ԵԴ1/0301/01/24 քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և այն Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան փոխանցելու մասին:

4. Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2025 թվականի մարտի 3-ին որոշում է կայացրել թիվ ԵԴ1/0301/01/24 քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

5. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2025 թվականի մարտի 6-ին:

<u>Ընդդատության վերաբերյալ հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

6. 2024 թվականի փետրվարի 2-ի որոշմամբ Կ.Ադամյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հանրային քրեական հետապնդում է հարուցվել այն բանի համար, որ *«(…) նա Կոտայքի մարզի Եղվարդ համայնքում հողամասեր ձեռք բերելու պատրվակով Ռազմիկ Խաչատուրեանից խարդախությամբ հափշտակել է առանձնապես խոշոր չափերի գումար:*

Այսպես.

Կարեն Ադամյանը, «Ալ Աին» ՍՊ ընկերության տնօրեն Ռազմիկ Խաչատուրեանից տեղեկանալով հիշյալ ընկերության կողմից Կոտայքի մարզի

Եղվարդ համայնքում հողամասեր ձեռք բերելու մտադրության մասին, որպես բնակիչների շրջանում հարգանք վայելող անձ՝ առաջարկել է իր օգնությունը հիշյալ գործընթացում՝ իրականում նպատակադրվելով խարդախությամբ հափշտակել վերջինիս գումարները:

Հանցավոր մտադրությունները քողարկելու և Ռազմիկ Խաչատուրեանին վստահություն ներշնչելու նպատակով Կարեն Ադամյանը 2018 թվականի ապրիլի 27-ին վերջինիս հետ կնքել է հանձնարարության պայմանագիր՝ հիշյալ համայնքում 5-6 հա հողամասի առուվաճառքը կազմակերպելու վերաբերյալ: Հանձնարարության կատարման պատրվակով Կարեն Ադամյանը 2018 թվականի հունիս ամսին՝ քննությամբ չպարզված օրը, Երևան քաղաքի Նալբանդյան փողոցի 50 շենքի թիվ 175/1 հասցեում գտնվող՝ Ռազմիկ Խաչատուրեանի գրասենյակում վերջինիցս առձեռն ստացել է 43.380.000 ՀՀ դրամին համարժեք 90.000 ԱՄՆ դոլար՝ իրականում չունենալով պայմանագրով նախատեսված հողամասերը ձեռք բերելու մտադրություն:

Հանցավոր մտադրությունն ավարտին հասցնելու նպատակով Կարեն Ադամյանը կազմակերպել է հանձնարարության պայմանագրով չնախատեսված և առավել ցածր գնով հողամասերի ձեռքբերում՝ դրանց համար վճարելով ընդհանուր 20.930.000 ՀՀ դրամ, որպիսի հանգամանքը քողարկելու համար Կարեն Ադամյանը գրիչով ջնջումներ կատարելու եղանակով փոխել է արդեն իսկ ձեռքբերված ցածրարժեք հողամասերի սեփականության վկայականների մեջ նշված կադաստրային ծածկագրերը՝ դրանք համապատասխանեցնելով հանձնարարության պայմանագրի մեջ նշված հողամասերի տեղադիրքերին և ուղարկել Ռազմիկ Խաչատուրեանին՝ այդկերպ խարդախությամբ հափշտակելով առանձնապես խոշոր չափերի՝ 22.450.000 ՀՀ դրամ: (…)»[1]:

7. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2025 թվականի փետրվարի 24-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Թիվ ԵԴ1/0301/01/24 քրեական վարույթով մեղադրական եզրակացությանը կից վարույթին ներգրավված բոլոր անձանց կարգավիճակի և վերաբերելի անձնական*

[1] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 6, թերթեր 19-20:

փվյալների տեղեկանքի համաձայն՝ քրեական վարույթին ներգրավված են մեղադրյալը, տուժողը (նախնական դատաքննությունների ընթացքում տուժողի դատավարական կարգավիճակը դադարեցվել է և սույն քրեական վարույթով ներգրավվել է այլ տուժող, որը սույն վարույթով հանդես է գալիս լիազոր ներկայացուցչով), և 16 վկաները, բացի այդ, մեղադրյալն ունի պաշտպան, որի տվյալները տեղեկանքում նշված չեն, այսինքն՝ վարույթին ներգրավված է ընդհանուր 19 անձ, որոնցից 11 անձ, այդ թվում մեղադրյալը, բնակվում է ՀՀ Կոտայքի մարզում:

Դատարանն արձանագրում է, որ վերը նշված անձանց հարցաքննությունները նախնական դատաքննությունների ընթացքում ընդգրկվել են ապացույցների ծավալում:

Նկատի ունենալով, որ վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում են ՀՀ Կոտայքի մարզում, ինչպես նաև մեղադրյալը համաձայնվել է, որ վարույթն ըստ ընդդատության փոխանցվի ՀՀ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, դատարանը գտնում է, որ սույն քրեական վարույթի տարածքային ընդդատությունն անհրաժեշտ է փոխել և այն ուղարկել ՀՀ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան: (...)»[2]:

8. Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2025 թվականի մարտի 3-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(...) Դատարանը արձանագրում է, որ թեև պահպանվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի կարգավորումները, սակայն ուսումնասիրելով քրեական գործի նյութերը, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի որոշումը, դատակոչված անձանց շրջանակը և վերջիններիս բնակության և/կամ գործունեության հասցեները և դրանք համադրելով ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի թիվ ԱՎԴ4/0051/01/21 գործով վարույթի ընդդատության հարցը լուծելու մասին որոշմամբ արտահայտված դիրքորոշման հետ հարկ է փաստել, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանն արձանագրել է, որ վարույթին ներգրավված է ընդհանուր 19*

[2] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 7, թերթեր 101-102:

անձ, որոնցից 11 անձ, այդ թվում մեղադրյալը, բնակվում է ՀՀ Կոտայքի մարզում, սակայն ուսումնասիրելով դատակոչված անձանց ցուցակը, որոնք նույնիսկ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի կողմից նախնական դատալսումների՝ ապացույցների ծավալի հարցի քննարկման արդյունքում՝ Դատարանը կայացրել է ապացույցների ծավալը սահմանելու մասին որոշում, որում ներառվել են նաև դատակոչված վկաների և մեղադրյալի հարցաքննությունները:

Դատարանը գտնում է, որ քրեական գործով ներգրավված են ընդհանուր 19 մասնավոր մասնակիցներ և վկաներ, որոնցից 10-ը՝ այդ թվում մեղադրյալը, բնակվում են ՀՀ Կոտայքի մարզում, իսկ 9-ը անձ, այդ թվում տուժող Ռ.Խաչատրյանը, ում տուժողի կարգավիճակը հետագայում վերացվել է և հանդիսանում է վկա, բնակվում են Երևան քաղաքում: Դատարանը գտնում է, տվյալ պարագայում երբ անձանց հարաբերակցությունը մեկ անձի տարբերություն է, պետք է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի կողմից (համաձայն՝ ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի թիվ ԱՎԴ4/0051/01/21 գործով վարույթի ընդդատության հարցը լուծելու մասին որոշման) հիմնավորվեր քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխելու անհրաժեշտությունը՝ արդարադատության շահի տեսանկյունից, ինչը ըստ էության որոշման մեջ բացակայում է և անհասկանալի է, թե ինչու արդարադատության շահի տեսանկյունից պետք է քննվի Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում:

Հարկ է նշել նաև, որ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի թիվ ԱՎԴ4/0051/01/21 գործով անդրադարձ է կատարվել նաև, որ նշված լիազորությունը պետք է գործադրվի բացառիկ դեպքերում, որը սույն գործի հանգամանքներից և պայմանավորված վարույթին ներգրավված անձանց ցանկից, կարելի է գնահատել, որ բացառիկությունը չի հիմնավորվել:

Ամփոփելով վերոնշյալը դատարանը գտնում է, որ թիվ ԵԴ1/0301/01/24 քրեական գործն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին: (...)»[3]:

<u>Վճռաբեկ դատարանի քրեական պալատի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

9. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի կողմից թիվ ԵԴ1/0301/01/24 քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և քրեական վարույթը Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան փոխանցելու մասին որոշումը:

10. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

11. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք*»:

11.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[4]:

---

[3] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 7, թերթեր 112-115:

[4] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[5]:

12. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «*(…) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (…), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված): (…)*

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախատրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը

---

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (…)»[6]:

13. Վերոգրյալից հետևում է, որ ընդդատության կանոններն այն չափանիշներն են, որոնց հիման վրա որոշվում է, թե տվյալ գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն: Այդ չափանիշների հիմքում ընկած է ոչ թե իրավակիրառների սուբյեկտիվ հայեցողությունը, այլ քրեական վարույթի օրենքով սահմանված օբյեկտիվ հատկանիշները, որոնց առկայությունն էլ թույլ է տալիս արձանագրել տվյալ դատարանի՝ այդպիսին հանդես գալու իրավունքն այդ վարույթով: Միաժամանակ, ընդդատության կանոնները կոչված են անձին զերծ պահելու դատական շրջապտույտից, որը կարող է առաջանալ, եթե դատարանները հրաժարվեն գործը վարույթ ընդունել իրենց ընդդատյա չլինելու պատճառաբանությամբ:

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «*Տարածքային ընդդատությունը բոլոր մեղադրյալների համաձայնությամբ կարող է փոխվել, եթե վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում է առաջին ատյանի մեկ այլ դատարանի դատական տարածքում: Ընդդատությունը փոխելու որոշումն ընդունում է մեղադրանքը քննող դատարանը*»:

Նույն օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«(…) 4. Վարույթն ըստ տարածքային ընդդատության ստացած առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատալսումներ նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին, եթե համաձայն չէ վարույթի տարածքային ընդդատությանը:*

(…)

7. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քրեական պալատը վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա

---

[6] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

ժամկետում վերջնականապես լուծում է վարույթի տարածքային ընդդատության հարցը: (...)»:

15. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, փաստելով, որ վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում է Կոտայքի մարզում, ինչպես նաև այն, որ մեղադրյալն իր համաձայնությունն է հայտնել վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու վերաբերյալ[7], որոշում է կայացրել քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և վարույթը Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան փոխանցելու մասին[8]:

- Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանն իր անհամաձայնությունն է հայտնել քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի որոշմանը՝ արձանագրելով, որ թեև պահպանվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները, սակայն Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի կողմից չի հիմնավորվել քրեական վաույթի տարածքային ընդդատությունը փոխելու անհրաժեշտությունը՝ արդարադատության շահի տեսանկյունից[9]:

16. Սույն վարույթի փաստական հանգամանքները գնահատելով վերոշարադրյալ իրավադրույթների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատն արձանագրում է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված՝ քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու լիազորությամբ, քրեական վարույթի տարածքային ընդդատությունը մեղադրյալի համաձայնությամբ փոխել և վարույթը Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր

---

[7] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 7, դատական նիստի արձանագրություն, թերթեր 98-100:
[8] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:
[9] Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

իրավասության դատարան է փոխանցել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջների պահպանմամբ, որպիսի արձանագրում է կատարել նաև Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը: Մասնավորապես, սույն քրեական վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ մեղադրյալ Կ.Ադամյանի, վկաներ՝ Ս.Գրիգորյանի, Գ.Հովսեփյանի, Ս.Վարդանյանի, Ե.Հովհաննիսյանի, Ա.Հարությունյանի, Մ.Առաքելյանի, Հ.Հարությունյանի, Հ.Սարգսյանի, Հ.Հակոբջանյանի բնակության վայրն է Կոտայքի մարզը, վկաներ Ռ.Խաչատուրեանի, Ն.Պաղտասարեանի, Գ.Ավետիսյանի, Ա.Ասատրյանի, Ա.Չէօրէքճեանի, Գ.Հասրաթյանի, Լ.Նիկողոսյանի[10], տուժողի լիազոր ներկայացուցիչ Ա.Պետրոսյանի[11] և պաշտպան Կ.Հովհաննիսյանի[12] բնակության վայրն է Երևան քաղաքը: Այսինքն, սույն վարույթին ներգրավված են տասնինը մասնավոր մասնակիցներ և վկաներ, որոնց մեծամասնությունը՝ տաս անձ, բնակվում է Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում:

Վերոգրյալի հետ մեկտեղ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը հարկ է համարում նշել, որ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի որոշման հիմքում դրված հիմնավորումները չեն բխում ինչպես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի կարգավորումից, այնպես էլ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի՝ թիվ ԱՎԴ4/0051/01/21 քրեական վարույթի տարածքային ընդդատության հարցը լուծելու մասին որոշումից, նկատի ունենալով, որ սույն և նշված վարույթի՝ ընդդատությունը փոխելու համար էական նշանակություն ունեցող փաստական տվյալները նույնական չեն:

17. Ամփոփելով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատն արձանագրում է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի կողմից թիվ ԵԴ1/0301/01/24 քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և քրեական վարույթը Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան փոխանցելու մասին որոշումը հիմնավոր է:

---

[10] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 6, թերթեր 53-54:
[11] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 7, թերթ 68:
[12] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 7, թերթ 69:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ ԵԴ1/0301/01/24 քրեական վարույթն ըստ ընդդատության ուղարկել Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

Նախագահող՝ _____ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Դատավորներ՝ _____ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

_____ Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

_____ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

_____ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ